

## ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎ ԲԱԳՐԱՏՅԱԼ, ասպիրանտ,  
ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ

### ԿՈՐԱՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԵՐՈՍԻ ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈԼԻ ԹԱՐԱՂԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Բանալի բառեր - Գոլի Թարաղի, իրանական սփյուռք, մենություն, ժամանակ և տարածություն, փախուստ և վերադարձ, երկու աշխարհներ, միջանկյալ վիճակ:*

Ժամանակակից մարդը հաճախ է բախվում մենության, օտարված, չհասկացված լինելու խնդրին: Այս երևույթը գուցե առաջին հայացքից աննկատ է մնում, սակայն մարդուն անվերջ տանջող, նրա հետագա վարքագծի վրա ազդեցություն ունեցող երևույթ է: Այս խնդրի գեղարվեստական արտացոլում արտահայտված է իրանական սփյուռքի 20-21-րդ դարերի ամենից նշանավոր կին արձակագիրներից մեկի՝ Գոլի Թարաղիի մի շարք ստեղծագործություններում:

Թեմային կարող ենք անդրադառնալ Գոլի Թարաղիի «Ցիրուցան հիշողություններ» (1995), «Ուրիշ տեղ» (2001), «Երկու աշխարհ» (2003), «Երկրորդ հնարավորություն» (2015) պատմվածքների ժողովածուներում և «Վերադարձ» (2018) վեպում:

**1.Փախուստ և վերադարձ:** Գոլի Թարաղիի գրեթե բոլոր հեռոսները մշտապես փախուստի և վերադարձի հոգեվիճակի մեջ են: Նախ պետք է պարզել այդ կերպարների ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգական փախուստի պատճառները: Իրանի համար բեկումնային էր 1979թ.-ը, երբ երկրում տեղի ունեցավ Իսլամական հեղափոխությունը, ողջ երկրում հաստատվեցին կրոնական բարքեր, խիստ օրենքներ: Մեկ տարի անց, այս ամենի տպավորությունից դեռ դուրս չէկա՞ծ, ժողովրդի գլխին պայթում է մի նոր արհավիրք՝ Իրան-Իրա-

քյան ուղեւամյա պատերազմը:

Այսպիսի դժվարին ժամանակաշրջանում հազարավոր իրանցիներ ստիպված էին լքել սեփական երկիրը՝ հաստատվելով Եվրոպայում և Ամերիկայում: Սակայն Արևմուտքը պատրաստ չէր նրանց գրկաբաց ընդունելու, և բնական է՝ գաղթականներին մեծ փորձություններ էին սպասում:

Հենց այսպիսի պայմաններում են ապրում Թարաղիի՝ Իրանից Փարիզ արտագաղթած հերոսները, սակայն նրանք ունեն մի շարք խնդիրներ՝ լեզվի չիմացություն, հասարակամշակութային խորթություններ, որոնք դառնում են հերոսի՝ հասարակությանը չմերվելու պատճառ:

Անձանոթ, օտար պայմաններում ու հասարակության մեջ հերոսը դառնում է մենակ, օտարված, և այդ դժվարությունը հաղթահարելու առաջին քայլը փախուստն է իրականությունից, որը զուգահեռվում է նաև դեպի մանկություն, անցյալ մտովի վերադարձով: Դեպի անցյալ ճամփորդող հերոսը հիշում է մանկության ամենից քաղցր հուշերը, մարդկանց: Հիշենք **«Շեմիրանի ավտոբուս»** պատմվածքը՝ «Տիրուցան հիշողություններ» ժողովածուից: Այստեղ շղթայվում են փարիզյան ձմեռային սառնության և Թեհրանի շեմիրանյան «կորուսյալ դրախտի» մտապատկերները, Շեմիրանի ավտոբուսի վարորդը՝ Ազիզ աղան, դառնում է անցյալը ներկային կապող կարևոր հանգույց:

«Տիրուցան հիշողություններ» ժողովածուից մեկ այլ՝ **«Մի տուն երկնքում»** պատմվածքում ևս անվերջ որոնումներից հետո գլխավոր հերոսուհին՝ Մահին բանուն, գալիս է անցյալի գիրկը: «...Դեմավենդ լեռը՝ բարձր, կանգուն ու վեհաշուք, հեռվից իրեն էր նայում: Հոր փառահեղությունն էր. երբ նամազից հետո կանգնում էր, քամին սպրդում էր նրա արայի տակ, թվում էր, թե գլուխը երկինք կհասնի, իսկ ոտքերը հողում արմատներ ունեն: Ի՛նչքան լավ էր այն ժամանակ, երբ գազաթը, դեպի երկինք հասնող այդ լեռը, կախարդական, փառահեղ բարձունքը կանգուն էր: Այդ կանգուն տղամարդը՝ պատշգամբի մարմարե երկու սյուների միջև՝ կեսօրվա ադոթքին՝ իր ստվերով մինչև աշխարհի սկիզբը հասած: Ի՛նչ հաճելի էր, երբ նրա արայի տակ էր թափանցում, նստում ուսերին՝ աշխարհի ամենաբարձր գազաթին՝ հողից, կավե փոքրիկ տներից ու մրջյունի չափ աննշան ու ողորմելի մարդկանցից անդին: Ինքնաթիռի պատուհանից նայելիս էլ հենց

այս պատկերն էր տեսնում, և թվում էր, թե վերստին նստած է հոր ուսերին, և որևէ մեկի ձեռքն իրեն չի հասնի»<sup>1</sup>:

Հեղինակը հատուկ շեշտադրությամբ է արտահայտել անցյալի խաղաղ հուշերում հաստատված հերոսի հոգեվիճակը, որն ասես այլևս ցանկություն չունի վերադառնալ ներկա:

Օտարված մարդու ամենից կարևոր խնդիրներից մեկն է վերադարձը դեպի ներկա, ներկայի հետ համաչափ ապրել շարունակելը, սակայն, ինչպես երևում է, մանկությունը, նոստալգիկ հիշողությունները հերոսի համար կարողանում են երջանկության պատրանք ստեղծել: Հենց այդ աշխարհում է հերոսը կարողանում գտնել իր կորսված Ես-ը: Ասվածի վկան է դառնում այս խոսքը «**Առաջին օր**» պատմվածքից. «Պիտի հետևում թողնեմ անցյալն ու վերադառնամ ներկա: Պիտի ճանաչեմ այսօրվա իմ «Ես»-ը, այդ իրական կերպարին շունչ տամ վաղն ու ապագայում: Չի ստացվում: Գալիքից վախենում եմ, «այսօր»-ը դատարկ է ու անորոշ և ոչ մի տեղ չի հանգրվանում: Միայն անցյալն է, որ կա, գոյություն ունի և մայրիկի ծաղկավոր փեշի նման թաքնվելու հնարավորություն է ինձ տալիս»<sup>2</sup>:

Սակայն Էկզիստենցիալ որոնումների մեջ գտնվող հերոսն ինքն էլ հասկանում է, որ սեփական Ես-ը միայն ներկայում, իրական աշխարհում է հնարավոր գտնել:

**2. «Թռչող մայրերի» մենությունը:** Գոլի Թարաղիի ստեղծագործությունների կարևորագույն առանցքներից մեկն է իրենց զավակների հանդեպ անսահման սիրով լցված, սակայն հիմնականում այդ սերը հետ չստացող տարեց մայրերի հոգեբանական մենության պատկերումը: Հեղինակի մի շարք երկերում ենք հանդիպում օտարված, ավելորդ դարձած մոր կերպարին: Այս կանայք լցված են մեծ սիրով իրենց բոլոր ազգականների նկատմամբ, սակայն ոչ ոքի սրտում տեղ չունեն, և արտագաղթի ժամանակ նրանց լքում են՝ թողնելով պատերազմի ճիրաններում: Գոլի Թարաղին այս կանանց անվանեց «թռչող մայրեր»՝ ասելով. «Շատ իրանցի մայրեր զոհեր են, հեղափոխության իրական զոհեր, քանզի նրանց զավակները ստիպված էին լքել երկիրը: Եվ վերջիններս չէին կարող

<sup>1</sup> «Գոլի Թարաղի - Տուն՝ երկնքում» <https://hetq.am/hy/article/66079> (Հասանելի է առ 24.05.19):

<sup>2</sup> «Գոլի Թարաղի - Առաջին օրը» <https://granish.org/arajin-ory/>: [despicts-the-comedy-and-tragedy-of-exile](https://granish.org/arajin-ory/):

տանել տատիկներին և մայրիկներին իրենց հետ»<sup>3</sup>:

Թարաղիի «Վերադարձ» վեպում ևս հանդիպում ենք այս տերմինի գործածությանը: «...Մտերիմներն անունը «թռչող կին» էին դրել, քանզի Էուբյան ամեն մի հյուլէ վագում էր որ- և է մեկի մոտ կամ ինչ-որ մի տեղ. Ամերիկա՝ որդիների մոտ, ամուսնու հետևից՝ Թեիրան, Կանադա՝ քրոջ մոտ, Գերմանիա՝ դեպի եղբայրը, և դեպի մոտ ընկերները՝ ցիրուցան աշխարհի այս ու այն կողմերում»<sup>4</sup>:

Օտարված մոր կերպարին ենք հանդիպում Գոլի Թարաղիի «Մի տուն երկնքում» պատմվածքում: Այստեղ գլխավոր հերոսը Մահին բանուն է, որը Իրան-Իրաքյան պատերազմի պատճառով հայտնվում է օտարության մեջ՝ այլևս երբեք բախտ չունենալով տեսնել հարազատ տունը: Օտար իրականությանը, կարոտին չհարմարվելով՝ այս ծեր կնոջ միակ սփոփանքը դառնում են անցյալի հիշողությունները:

Թարաղին իր պատմվածքում վարպետորեն է կերտել ծեր մոր կերպարը, նրա ներքին դրաման, սերը, զոհաբերությունները, հայրենի հողի անհագ կարոտն ու մանկության տարիների վերհուշը, որոնք դարձել են նրա թափառական օրերի ուղեկիցն ու սփոփանքը: Պատերազմից հետո փողոցում հայտնված կիևը վերջապես ապաստան է գտնում որդու տանը՝ Ֆրանսիայում, այնուհետև դստեր մոտ՝ Լոնդոնում, իսկ այնտեղից եղբոր մոտ՝ Կանադայում: Եվ այդ երկարատև, մի կյանքի տևողություն ունեցող թռիչքը դառնում է Մահին բանուկի վերջին ապաստանը:

Այս մեծ աշխարհում իր ծերունական անկյունը երբևէ չունենալու Մահին բանուկի միակ երազը այն երկնային ապաստանն է դառնում, որտեղ կգտնի իր հավերժական հոգեկան անդորրը<sup>5</sup>:

Մահին բանուկի դժվարին ապրումները տեսնելով՝ հայ ընթերցողի մտահորիզոնում հաճախ է հայտնվում Դերենիկ Դեմիճյանի «Ավելորդը» պատմվածքի հերոսուհին՝ իր համաճանաչական ճակատագրով: Նա էլ անտեսված է իր հարազատ եղ-

<sup>3</sup>«Pomegranate Lady» Despicts the Comedy and Tragedy of Exile – NPR Books, <http://www.npr.org/2013/12/07/249237327/pomegranate-lady-despicts-the-comedy-and-tragedy-of-exile>:

<sup>4</sup>Վերադարձ – Գոլի Թարաղի, թարգմ.՝ Ա. Բագրատյան, խմբ.՝ Ա. Նիկողոսյան, Եր., Անտարես, 2020, էջ 10:

<sup>5</sup>Սաֆրաստյան, Վտարանդիության և արտագաղթի թեման իրանական սփյուռքի գրականության մեջ (1979-2015 թթ.), 2016, էջ 211:

բոր կողմից: Նրա հարազատներն արտագաղթում են պատերազմի պատճառով, սակայն նրան թողնում նույն այդ պատերազմի ճիրաններում ասելով, որ նա ծեր է և ճանապարհի դժվարություններին չի դիմանա<sup>6</sup>:

Մի շարք գրականագետներ Գոլի Թարաղիի ստեղծագործության գազաթնակետն են համարում **«Անար բանուն և իր որդիները»** պատմվածքը՝ «Ուրիշ տեղ» ժողովածուից: Այս պատմվածքի գլխավոր հերոսուհին Անար բանուն է՝ Յագղից Շվեդիա՝ որդիների մոտ մեկնել փորձող տարեց մի կին: Ողջ պատմվածքը հյուսում է Անար բանուհի և գլխավոր հերոսուհու՝ տվյալ դեպքում հեղինակի կյանքի պատմությունը: Շատ գրականագետներ են փորձել անդրադառնալ պատմվածքի ասելիքին, դրա մեջ փնտրել Թարաղիի կենսագրական տվյալները, սակայն ամենից լավ պատասխանը տվել է հենց ինքը՝ հեղինակը՝ իր **«Կորած ժամանակի և տարածության որոնումը»** հարցազրույցում. *«Անար բանուհին, իսկապես, Թեհրանի օդանավակայանում եմ հանդիպել ու ծանոթացել: Նրա պատմությունը գրի եմ առել կետ առ կետ, այնպես, ինչպես պատահել է: Անար բանուն հարյուրավոր ծեր մայրերի նման հեղափոխության զոհն է: Տղաների համար դռներդուռ է ընկել, թափառական դարձել: Բայց նրա կյանքին զուգահեռվում է մի այլ կյանք ևս՝ հեղինակի կյանքը: Նա նույնպես անընդհատ գնալ-գալու մեջ է և փնտրում է «ուրիշ տեղ»՝ երևակայական քաղաք, որը հասանելի է: Անար բանուհի նման նա ևս մոլորված ուղևոր է և հայրենի սահմաններից դուրս է փնտրում բնակավայր, որտեղ գուցե մոտ կլինի իր ներքին համոզմունքներին ու ցանկություններին: Պատմության վերջն անհայտ է: Մինչև այն բացահայտելը գրողը պարտք է մնում: Տասնյակ հեռախոսազանգեր էի ստանում տարբեր մարդկանցից, որոնք անհանգստացած էին Անար բանուհի ճակատագրով և ցանկանում էին իմանալ, թե ինչ է պատահել նրան: Մի՞թե կորել է: Հասա՞վ տղաներին: Վերադարձա՞վ Իրան: Ես չգիտեմ և շատ եմ ցանկանում, որ որևէ մեկն ինձ պատմի այդ մասին»<sup>7</sup>:*

Մեկ այլ «թռչող մոր» կերպարի ենք հանդիպում «Երկրորդ

<sup>6</sup> Տե՛ս **Դեմիրճյան Դ.**, Պատմվածքներ, 1977թ., էջ 37:

<sup>7</sup> «Հարցազրույց Գոլի Թարաղիի հետ - Կորած ժամանակի և տարածության որոնումը» - <https://granish.org/harczruyuc-goli-taragi/>:

հնարավորություն» ժողովածուի «**Ընտրություն**» պատմվածքում: Այստեղ մերժված կնոջ ճակատագիրն է կրում մի տարեց կին, որն իր կյանքի վերջին տասնամյակները նվիրել է որբ թոռան ինսամքին ու դաստիարակությանը, հանուն նրա վաճառել իր տունը, ուր էր միայն կարողանում գտնել մահացած զավակների հուշերը: Սակայն նրա երիտասարդ թոռը՝ Ամիրհոսեյնը, ամենևին էլ չի կարողանում տատի նման ապրել, նա երագում է բնակվել Եվրոպայում, որտեղ նրան է սպասում իր սիրելին, հեռվից պահանջում, որ տատին անտեսի, տունը վաճառի ու գա իր մոտ՝ Եվրոպա: Ի վերջո Ամիրհոսեյնը, կուլ գնալով սիրած աղջկա պահանջներին, վաճառում է տունը, տատի համար ծերանոցում տեղ ամրագրում, սակայն տատը, երբ պատահականությամբ լսում է թոռան հեռախոսազրույցը, որտեղ էլ հենց իմանում է իրեն՝ ծերանոց նետելու մասին, առանց որևէ բառ ասելու հեռանում է տանից ու Ամիրհոսեյնի կյանքից:

Մարդու մենության, ինչպես նաև «թռչող մոր» կերպարին ենք հանդիպում նաև Թարաղիի «**Վերադարձ**» վեպում: Այս ստեղծագործության մեջ գլխավոր հերոսուհին Մահսիման է, որի կյանքը վերածվել է շարունակական փնտրտուքի: Փարիզ արտագաղթած այս իրանցի կինը մեծ դժվարությամբ է կարողացել հարմարվել նոր, եվրոպական բարքերին, որոշ չափով նրա կյանքը խաղաղվել է, սակայն արևդիատ նրա գլխում վերադարձի միտքն է: Վերադարձ որդիների մոտ՝ Ամերիկա, վերադարձ հայրենիք՝ Իրան, որտեղ հույս ունի, թե կգտնի, իր ընտանիք կբերի ամուսնուն: Մինչ վերջնական որոշում կայացնելը՝ գնալ Իրան, թե՞ ոչ, նա ընկնում է հուշերի գիրկը: Թե ինչպես մի օր ավագ որդին բռնեց Ամերիկայի ուղին, կարճ ժամանակ անց էլ նրան հետևեց կրտսերը: Ամուսինը գնաց Թեհրան՝ հույս ունենալով հետ բերել իրենց գույքը, ունեցվածքն ու դիրքը, որ Իսլամական հեղափոխությունից հետո այլևս գոյություն չունեին:

Այս կինն էլ՝ ինչպես Անար բանուն, Մահին բանուն, մոռացած իրենց անձնական ցանկություններն ու նպատակները, փորձում են ամեն կերպ ամուր պահել ընտանիքը, ազգային տարրը, մայրենի լեզուն: Սակայն հեղինակը նրբորեն ցույց է տալիս, թե ինչքան դժվար է օտարության մեջ պահպանել սեփական ինքնությունը, կրոնը, լեզուն: Նույնիսկ Մահսիմայի որդիներն են դարձել անգլախոս, ամուսնացել օտարազգիներ

րի հետ: Հենց այս ծանր հոգեվիճակն է ստիպում հերոսուհուն ճամփորդել, վերադառնալ Իրան: Եթե վերը նշված պատմվածքներից մի քանիսում սահմանային վիճակի հասած հերոսների վերջին ելքը մնում էր մտովի ճամփորդությունը դեպի անցյալ, ապա ինչ-որ չափով Մասիման նրանցից ավելի բարվոք վիճակում էր գտնվում: Նա ֆիզիկապես է կարողանում մեկնել հայրենիք, սակայն երկար տարիներ Եվրոպայում ապրած մարդուն նոր, ավելի կրոնական Իրանը գրկաբաց չէր ընդունելու: Նա կարծես թե հրանում լրիվ օտարական է, ինչ-որ չափով նրա համար խորթ են իսլամական օրենքները.

«...Ավտորուսի վարորդն ասաց.

- Տիկի՛ն, առաջնամասը տղամարդկանցն է: Խնդրում եմ հետև անցեք:

Մահսիման ապշած ու զարմացած հայացք գցեց կողքերը: Տեսավ՝ իրենից բացի՝ ոչ մի կին այդ հատվածում չկա: Կարմրեց և զգաց, որ **սեփական հայրենիքում էլ է խորթ**: Վերկացավ, կանգնեց: Չգիտեր ինչ անել: Երկու հատվածները մեջտեղից փակ էին: Տղամարդկանցից մեկն ասաց.

- Պետք է իջնես, մեջտեղի դնով բարձրանաս:

Մահսիման մտածեց՝ իսլամական կանոններ: Տղամարդիկ՝ առջևում, կանայք՝ հետևում: Պետք է սովորեմ...»<sup>8</sup>:

Հերոսուհուն ապշեցնում է նոր թեհրանը: Կարելի ասել՝ իր մանկությունից ոչ մի պատահիկ չի գտնում. հին, սլացիկ ծառերի փոխարեն բարձրահարկ շենքեր ու աշտարակներ են: Հին ճարտարապետության կողքին բարձրանում են նոր, եվրոպական շինություններ: Եվ հերոսուհին զարմացած է, որ հին քաղաքը, իր ողջ քաղցր հուշերը, որոնց երազանքն էին նրան բերել Իրան, այլևս չկան:

Այսպիսի հոգեվիճակում հերոսուհու մենությունը, օտարվածությունն էլ ավելի է խորանում: Նա իրեն զգում է երկու աշխարհների, երկու քված տարածությունների արանքում: Չգիտի, թե որ մեկին է պատկանում ինքը, որն է իր հետագա անելիքը: Եվ ամենից կարևորը՝ սեփական Ես-ը գտնելու Էկզիստենցիալ փնտրտուքները, որ նրան բերել էին Իրան, դառնում են ապարդյուն:

Գոյի Թարադին այս վեպով մի շարք կարևոր շեշտադ-

<sup>8</sup> گنگ 'ی قرت ی گ - ت شگ زاب - نارته ، رولدی ، ۱۳۹۷ ، ص ۹۱ (թարգմ. պարսկերենից՝ Ա.Բ)

րումներ է իրականացնում: Դրանցից մեկը այսօրվա իրանցիների երազանքի պատկերումն է: Գրեթե բոլորն իրենց պատկերացնում են Եվրոպայում կամ Ամերիկայում: Նա նշում է՝ ամերիկյան երազանքը ասես կուրացրել է բոլորին: Ոչ միայն վտարանդիության մեջ ապրողներն են կորցրել իրենց սեփական Էուրթունը, ազգային մտածելակերպը, այլ նաև բուն հայրենիքում ապրողները:

Այն նպատակները, որոնց համար Մահսիման Փարիզից հասել էր Թեհրան, ապարդյուն և անկատար համարելով, ամուսնուն ուրիշ, ավելի երիտասարդ կնոջ ընկերակցությամբ տեսնելով, սեփական օտարվածությունն էլ ավելի խորացնելով՝ նա ի վերջո վերադառնում է Փարիզ՝ Թեհրանից տանելով մի շարք սև ու սպիտակ լուսանկարներ: Իսկ վեպի վերջում արդեն հեղինակը ցույց է տալիս մենակության մեջ ապրող կնոջ կյանքի մի հատվածը. «...*Մահսիման լուսանկարչական ցուցահանդեսի անունը դրել է «Նրանք, որ գնում են, և նրանք, որ վերադառնում են»:* *Լուսանկարները՝ կիսով չափ սև-սպիտակ, կիսով չափ գունավոր: Իրար միահյուսված երկու կյանք: Ինչպես իր կյանքը»*<sup>9</sup>:

Այս մի քանի պատմվածքներում Գոլի Թարաղին Մահին բանուհի, Անար բանուհի, Մահսիմայի և «Շնորոություն» պատմվածքի անանուն հերոսուհու կերպարների միջոցով ընդգծել է ազգային և մշակութային ինքնությունը կորցնելու ցավալի երևույթը՝ քննադատելով Իրանի քաղաքական վիճակը: Ինչպես նշում է գրականագետ Լ. Սաֆրաստյանը. «*Հայրենիքից հեռու, անորոշ ու անդեկ դեգերումների ճանապարհին Թարաղիի յուրաքանչյուր հերոսուհի իր «Նոր ֆիզիկական տան» պատերի ներքո կառուցում է երազների այն երկնային ապաստանը, ուր հավերժ կապրեր՝ իր հուշերին ու հայրենի տան կարոտին ամուր գգված: Հայրենի տան կարոտը հեղինակի հոգում մշտապես կանչող մեղեդի է, հայրենի տան կարոտով նա հյուսում է իր երազը և այլ իրական հողի վրա ապրում այդ երազում»*<sup>10</sup>:

**3. Հերոսի մենությունը՝ երկու աշխարհի միջև:** Գոլի Թարաղիի ստեղծագործություններն ասես երկու տարբեր, բայց

<sup>9</sup> Վերադարձ – Գոլի Թարաղի, թարգմ.՝ Ա. Բագրատյան, խմբ.՝ Ա. Նիկողոսյան, Եր., Անտարես, 2020, էջ 176:

<sup>10</sup> Սաֆրաստյան, Նշվ. աշխ., էջ 214:



միևնույն ժամանակ, իրար շատ ամուր թելով կապված աշխարհների համադրության արդյունքն են: Այս առումով ուշագրավ է հեղինակի «Երկու աշխարհ» ժողովածուն. թերևս պատմվածքների այս ժողովածուի վերնագիրն էլ ինքնանպատակ չէ: Այն բաղկացած է թվով յոթ պատմվածքներից, որոնցում հատկապես նշանակալից են առաջին և վերջին պատմվածքները՝ «Առաջին օր» և «Վերջին օր» վերնագրերով:

«Առաջին օր» պատմվածքում հերոսուհին հայտնվում է հոգեբուժարանում և իր առաջ նպատակ է դնում գտնել սեփական Ես-ը, վերջ տալ անցյալ ճամփորդելուց, հուշերի գիրկն ընկնելուց, ապրել այսօրով ու ներկայով, և այդ ամենը միայն հնարավոր է գրելով: Ժողովածուի արդեն վերջին՝ «Վերջին օր» պատմվածքում տեսնում ենք հոգեպես կատարյալ առողջ, իր նպատակներին հասած հերոսի, որը դուրս է գրվում հոգեբուժարանից:

Ինչպես այս երկու պատմվածքները, այնպես էլ ողջ ժողովածուն մի շարք գրականագետների առիթ են տվել՝ կարծելու, թե դրանք զուտ Թարաղիի ինքնակենսագրական հուշերն են, նրա ապրումները հոգեբուժարանում. այս հարցին ևս հեղինակն անդրադարձել է իր հարցազրույցներից մեկում:

«**«Երկու աշխարհ»-ի միմյանց լրացնող պատմվածքների ժողովածուն պատմություն է մի աղքատ հասունության և մեծ կյանք մտնելու մասին: Երկու աշխարհ, այսինքն՝ երկու բևեռ՝ ծնունդ և մահ, կեղծիք և ճշմարտություն, Շեմիրանի ապահով ու բարեկեցիկ միջավայրը՝ ի հակադրություն դրսի խառնիճադանջ աշխարհի, մանկության անեղծ ու քաղցր աշխարհ և աշխարհ մեծահասակների, խարդախ ու կեղծաբարո մեծահասակների: Հոգեբուժարանում հայտնվելը կարող է լինել իրականություն կամ հորինվածք: Դրան նայեք գրական ստեղծագործության կամ գրական կառուցվածքի տեսանկյունից: Կարևորն այն է, թե արդյոք հոգեբուժարան ընդունվելն ու դուրս գրվելը՝ ժողովածուի սկզբում և վերջում, գրական կիրառություն ունեն, թե՞ ոչ: Այս գրքում ամեն ինչ երկու երես ունի, հատկապես ժամանակն ու տարածությունը: Անցյալ և ներկա, Փարիզ և Թեհրան: Հոգեբուժարան ընդունվելիս հեղինակը հայացքը շրջել է դեպի անցյալ, և անցյալը միակ ժամանակն է, որն իրական է: Հետևաբար, նա նետվում է անցյալի գիրկը, որտեղ ծնվում են հիշողու-**

<sup>11</sup> «Հարցազրույց Գոլի Թարաղիի հետ - Կորած ժամանակի և տարածության որոնումը» - <https://granish.org/harczruuy-c-goli-taragi/>:

թյունները»<sup>11</sup>: Հեղինակը նաև նշում է, որ հոգեբանական առումով վերադարձը դեպի անցյալ ունի ամոքիչ հատկություն: Ըմբռնման ու բացահայտման ճամփորդություն է: Հերոսը պետք է ընկնի ջրհորի անհատակ խորքը և այնտեղից դուրս գա, վերադառնա կյանքով լի, ոչ ձեռնունայն: Դա է վերածնվելու պայմանը: «Վերջին պատմվածքում հերոսուհին հայացքը հառել է ապագային: Սպասումի ժամանակ է, լավ իրադարձությունների սպասումի: Շարժման, առաջընթացի, ընտրության, ճախրանքի ժամանակ է: Հոգեբուժարանում հայտնվելն ու այնտեղից դուրս գալը իրական փորձություն է»<sup>12</sup>:

«Առաջին օր» պատմվածքում երկու հակադիր բևեռներն են հոգեբուժարանը, ներկան և Շեմիրանի այգին, մանկության լուսավոր հերոսները, անհոգ կյանքի տարիները:

«Հրեշտակը» պատմվածքում Թարաղին ցույց է տալիս օտարության մեջ ապրող հերոսի հոգեբանությունը, նկարագրում նրա աշխարհը, որում կարևորագույն դերում է որդիների ազգապահպանման հարցը: Եվ այս աշխարհին է հակադրվում հերոսուհու հին բարեկամների կյանքը, որոնք, հայտնվելով Փարիզում, իրենց ներկայով ակամա դառնում են հին օրերի վկան:

Պատմվածքների այս ժողովածուն ավարտվում է «Վերջին օր» պատմվածքով, որի հերոսուհին երկար փորձություններից, տանջանքներից հետո ի վերջո գտնում է լույսը իր էկզիստենցիալ որոնումների արդյունքում՝ ասելով. «Այս այգու գորշ պատերից այն կողմ ինձ է սպասում ուրիշ աշխարհ, արթուն աշխարհ՝ սրճարանների ու փողոցների բույրով, մարդկանցով, խոսքերով, բառերով, սիրառատ տրոփյուններով, գունավոր խոստումներով, անուշ զգացողություններով, համերոով, արևով, ընկերներով...»<sup>13</sup>:

Թեպետ այստեղ տեսնում ենք իր վերջնական նպատակակետին՝ լույսին հասած գլխավոր հերոսուհուն, սակայն կա ևս մեկ կարևոր հերոսուհի՝ հոգեբուժարանում (խնդիրների, ապրածո կյանքը գնահատելու, արժևորելու, քեզ տանջող հարցերին պատասխան տալու աշխարհ) հայտնված կերպարը, որն անընդհատ մտորում է. «Ուզում է հասկանալ՝ ինչո՞ւ է ողջ ու ինչո՞ւ պիտի շարունակի ապրել: Ինչո՞ւ է եկել

<sup>12</sup> «Հարցազրույց Գոլի Թարաղի հետ - Կորած ժամանակի և տարածության որոնումը» - <https://granish.org/harcazuyc-goli-taragi/>:

<sup>13</sup> «Գոլի Թարաղի-Վերջին օրը» - <https://granish.org/verjin-ory/>:

այս աշխարհ և ինչո՞ւ պիտի գնա այս աշխարհից: Ուզում է բացահայտել մահվան առեղծվածը: Ասում է՝ մանկուց փնտրում է այդ հարցի պատասխանը. ծնողներն ի գորու չեն եղել բավարար պատասխան տալու: Ուսուցիչները տևտղել են հարցի ուղնուծուծը ու շրջանցել: Հոգևորականն ավելի քիչ բան է իմացել, քան մյուսները և դատարկաբանել է: Ասում է. «Մինչև համոզիչ պատասխան չստանամ, չեմ ապաքինվի...»<sup>14</sup>:

Ինչպես «Երկու աշխարհ» ժողովածուում, այնպես էլ «Վերջին օր» պատմվածքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սերունդների միջև շղթայական կապին: Այս պատմվածքում առկա է կնոջ և մոր՝ իբրև սերնդակցական շղթայի առկայությունը: «...Մայրս էլ է այնտեղ: Գլխի է ընկել, որ հիվանդ եմ: Ոչ ոք նրան չի ասել. հիվանդանոցում հայտնվելու հենց առաջին օրը նրա աչքերի առաջ ենք հայտնվել ես՝ հիվանդասենյակի թախտին պառկած, և բժշկուհին՝ սպիտակ խալաթը հագին: Հայրս էլ մահանալուց հետո շարունակում է կապը նրա հետ: Մայրս հաճախ է պնդում, որ լսել է հորս ձայնը, նրա պատգամը: Ութսունամյա մայրս, որ դժվարությամբ է քայլում և հազիվ տեսնում, մի ազնվական գերդաստանի վերջին օղակն է՝ հեռուներից եկած, տարբեր ժամանակաշրջանների միջով անցած. կրողը իմ տոհմի ժամանակի ու լեզվի: **Պատկերացնում եմ ինձ՝ մորս ու երեխաներիս միջև կանգնած. այն հատվածը, որտեղ հիմա ես եմ, հանգույց է անցած օրերի ու գալիք ժամերի միջև**»<sup>15</sup>:

Իր վերջնական ես-ը գտած, արդեն ֆիզիկական մենությունից չվախեցող հերոսուհին շարունակում է պահպանել իր սերնդակցական շղթան: Պատմվածքի վերջում հեղինակը ռուսական փայտե տիկնիկների կերպարն է դառնում կարևոր արտահայտչամիջոց. «Աչքս ընկնում է գիրուկ, փայտե տիկնիկին: Այն ռուսական տիկնիկներից է, որ գոտկատեղից երկու կես է լինում: Նրա փորի մեջ ավելի փոքր տիկնիկ կա, որը նույնպես բաժանվում է երկու մասի: Այդպես, հաջորդաբար, երրորդը, չորրորդը, ավելի ու ավելի փոքրերը, մինչև վերջին՝ սիսեռահատիկի չափ տիկնիկը: Գնում եմ այդ գիրուկ, հղի տիկնիկը: Նայում եմ նրան: Նմանություն եմ գտնում իմ ու նրա միջև: Իմ ներսում էլ են կուտակված մոր, տատի, քարանձավաբնակ քույրերի բազմաթիվ հին տիկ-

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> «Գոլի Թարաղի-Վերջին օրը» - <https://granish.org/verjin-ory/>:

նրկներ, որոնք, ամեն մեկը նստած ժամանակի իր աստիճանին, շղթայում են աշխարհի սկիզբն աշխարհի վերջին: Տեսնում եմ՝ այդ բեղմնավոր արգանդը նաև երեխաներիս ու թոռներիս ճակատագիրն է, պատմությունն է թոռներիս, ծոռներիս ու նրանց, որոնց չեմ տեսնելու»<sup>16</sup>:

Գոլի Թարաղիի ստեղծագործություններում մարդու երկփեղկվածության, Ես-երի բախման թեման տեսնում ենք նաև «**Տանձենի**» պատմվածքում: Այստեղ իրար են զուգահեռվում երբեմնի բերքատու, բայց այսօր ոչ մի պտուղ չտվող տանձենին և նախկինում մի շարք հողվածներ, հրապարակումներ ունեցած, բայց այսօր գրել չկարողացող հեղինակը:

Անվերջ որոնումների, պրպտումների մեջ հայտնված հերոսը ոչ մի կերպ չի կարողանում հաղթահարել դատարկության զգացումը, նա փորձում է գտնել իր այդ հոգեվիճակի բանալին, բայց ոչ մի արդյունք. «...այսօր, երբ մազերս ճերմակել են, փորս տոզել է, և անունս շատերի բերանում է, ու պետք է բարձունքում լինեմ, ընդհակառակը, ոչ մի զգացողություն չունեմ, և հին տաշտակն է դարձյալ առջևս: Ինչ էլ որ ասել եմ, դրան էլ չեմ հավատում, բոլոր սկզբունքներս փտել են անարմատ, փուտ բույսերի նման: Գուցե ներսս է հիվանդ, գուցե ախտն ինձնից է տարածվում: Գուցե հազարամյակի վերջին և դարասկզբին խավա՞ր է...»<sup>17</sup>:

Նույնանման իրավիճակի և դատարկության զգացումի մեջ է նաև տանձենին: Այն ոչ մի պտուղ տալու միտք չունի: Եվ հերոսը ի վերջո փորձում է տեսնել իր ու տանձենու միջև առկա լուռ, շատ կարևոր, ամուր կապը: Նա գնում է ծառի մոտ, հասկանում կարևոր ճշմարտությունը. «...Այս տանձենին թաքուն խոսք ունի և փսփսում է ինքն իր մեջ, ու ես զգում եմ կյանքը նրա ներսում: Թերևս հենց այս ծառից էր մայրս կապում լվացքի պարանը, նրա տերևների հաճելի ստվերում էր «Մ»-ն վանդակավոր ծածկոցը փռում ու գիրք կարդում: Այս ծառի վեհաշուք բնի վրա էր քույրս գրպանի սուր դանակով խոցված սրտեր նկարել, ես «Մ»-ի անունն էի փորագրել, եղբայրս հիշատակի խոսքերի մի տող էր գրել: Կարծում եմ՝ հորաքույրս հենց այս ծառի ճյուղից էր միջատապաշտպան շղարշի ծայրը կապում, հայրս նրա հարևանու-

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Գոլի Թարաղի, «Գոլի Թարաղի», Երևան, 1999, թ. 135 (Թարգմ. պարսկերենից՝ Նունե Հովհաննիսյանի):

*թյամբ աղոթք էր անում, չարածի փոքրիկներն իրենց փայտե նետերով նրա բնին էին նշան բռնում, ես բոբիկ, զգուշորեն բարձրանում էի ճյուղերով և կատարից՝ այդ փառավոր բարձունքից, աշխարհին ու «Մ»-ին էի նայում: Այս ծառն ինձ ճանաչում է և հիշում մանկությանս բոլոր օրերը»<sup>18</sup>:*

Եվ միայն իրական ճշմարտությունը հասկանալուց, ծառի հետ հոգեպես մեկտեղվելուց հետո է, որ հերոսը կարողանում է ձերբազատվել իրեն պատած մենությունից, գտնել կորսված Ես-ը:

Այսպիսով, ամփոփելով Գոլի Թարաղիի մի շարք ստեղծագործություններում առկա մարդու մենության խնդրի թեման՝ կարող ենք ասել, որ Գոլի Թարաղին բազմաշերտ հեղինակ է, որն իր արձակում մեծ տեղ է հատկացրել մարդու մենության խնդրին: Հեղինակն իր ստեղծագործություններում մանրամասն նկարագրել է իրանական սփյուռքի վիճակը, այն բարդությունները, որոնք թերևս սպասում են յուրաքանչյուր գաղթականի: Իր երկերում Թարաղին արծարծել է մի շարք կարևոր հարցեր՝ լեզվական, կրոնական, մշակութային անհատականության պահպանման կարևորությունը հայրենիքից դուրս:

### **AREG BAGRATYAN - THE PROBLEM OF LONELINESS OF THE CHARACTER LIVING IN THE FRAMEWORKS OF LOST TIME AND IDENTITY IN THE WORKS OF GOLI TARAGHI :**

Goli Taraghi is one of the most prominent representatives of the 20-21st century Iranian literature, an author who is well-known and renowned to both people in Iran and the Iranian diaspora. Our work is dedicated to the discovery of human loneliness in her works. In her literature, the author portrayed the physical and spiritual loneliness of the people living abroad, the connection between homeland and diaspora, the longing for a person's own homeland, family, etc. In the works of the author, human loneliness has been reflected mainly through the recollection as well as the existential elements. Her characters try to escape from the present, the reality and find a shelter in the sweet memories of solitude. At the same time, Taraghi skillfully tackled upon the topic of loneliness of "Elderly mothers", who are filled with the love towards their children, but who often do not get back as much love as they give. She depicted

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 150:

ՎՈՐՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՆԵՐՈՍԻ  
ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

the fate of old women who are in the clutches of war and homelessness.

We hopeful that our work will be a little contribution to studying one of the most prominent representatives of contemporary Iranian literature.

**Key words:** Goli Taraghi, Iranian Diaspora, loneliness, time and space, escape and return, two worlds, “in between” state.

**ԱՐԵԳ ԲԱԳՐԱԿՅԱՆ - ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ - ԵՄԵՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԺԻՎՈՒԹՅԱՆ ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**  
**ԱՐԵԳ ԲԱԳՐԱԿՅԱՆ - ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ - ԵՄԵՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԺԻՎՈՒԹՅԱՆ ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**  
**ԱՐԵԳ ԲԱԳՐԱԿՅԱՆ - ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ - ԵՄԵՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԺԻՎՈՒԹՅԱՆ ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈՒԻ ԹԱՐԱԴԻԻ ՍՏԵՐՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**  
Արեգ Բագրատյան - մեկնում է Իրանի և Իրանյան Դիասպորայի միջև գոյություն ունեցող «միջև» վիճակի, ժամանակի և տարածության հարցերի վերաբերյալ Գոլի Թարաղիի ստեղծագործություններում արված փորձերը և արդյունքները։

В произведениях автора одиночество человека отражалось в основном через воспоминания и экзистенциальные элементы. Его герои пытаются убежать от настоящего, от реальности и найти убежище в объятиях сладких детских воспоминаний. В то же время Тараги мастерски переплела тему одиночества пожилых матерей, полных большой любви к своим детям, но в основном не получающих от них любви в ответ, изобразила судьбу пожилых женщин, оказавшихся в тисках войны и бездомности.

Мы полны надежды, что наша работа станет небольшим вкладом в изучение одного из самых выдающихся представителей современной иранской литературы.

**Ключевые слова:** Голли Тараги, Иранская диаспора, одиночество, время и пространство, побег и возвращение, два мира, “Промежуточное” состояние.

## REFERENCES

Grakanutyan tesutyan ardi himnaxndirner, Yerevan, 2016, 332 ej:  
**Taraghi G.**, Veradardz, targm. A. Bagratyan, khmb. A. Nikoghosyan, Yerevan, 2020, 184 ej:

**Demrchyan D.**, Erker erku grqov, girq arajin, patmvacqner, Yerevan, 1977, 662 ej:

**Safrastyan L**, Vtarandiutyan ev artagaghti teman iranakan

spyurqi grakanutyan mej (1979-2015 tt.), Yerevan, 2016, 282 ej:

**Taraghi G.**, Khaterehaye paraqande, Tehran, 1371, 208 s.

Taraghi G., Do donia, Tehran, 1386, 215 s.

Taraghi G., Jayi digar, Tehran, 1396, 263 s.

Taraghi G., Forsat-e dobare, Tehran, 1396, 255 s.

Taraghi G., Bazgasht, Tehran, 1397, 160 s.

<https://hetq.am/>

<https://granish.org/>

<https://www.npr.org/>